

Բացատրագիր

<<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ<<ՂԱՐՍ>> մասնաճյուղի Շիրակի մարզի գյուղ Անուշավանի նախադպրոցական ուսումնական հաստատության էլ.մատակարարումը իրականացվում է նույն տարացքում գտնվող ՏԵ-6254-ի ցածր լարման վահանից համապատասխան № 0570 22.05.2017 ակտի:

Այս ծրագիրը նախատեսված է պատվիրատուի պատվերի հիման վրա: Անուշավանի նախադպրոցական ուսումնական հաստատության վերակառուցվող մասնաշենքի էլեկտրոսարքավորումների և էլեկտրոմատակարարման աշխատանքային գծագրերը մշակվում են համաձայն գործող նորմերի, կանոնակարգերի և ստանդարտների:

I կարգի էլեկտրողնդունիչ սարքերը նախատեսված է սնուցել Գլխավոր Բաշխիչ Վահանակից (ԳԲՎ):

- ՄԿՅ, էլեկտրոսարքավորումների տեղադրման կանոններ, բաժին 6-րդ, 7-րդ:
- ՇՈՒՄ 3.05.06-85 էլեկտրոտեխնիկական սարքավորումներ:
- ՇՄ 31-110-2003 շինարարության և նախագծման կանոնակարգեր:

Էլեկտրական հոսանքից պաշտպանվելը և հզորության բացատրությունը

I-ին կարգի սպառողական համակարգը սնուցվում է ոչ ավտոմատ միացման սարքից (Մտնող Բաժանարար Սարք - ՄԲՍ), որը միացվում է տարբեր հոսանքի աղբյուրներից տրանսֆորմատորային կայանից (որը համարվում է հիմնական սնուցման աղբյուրը) և արևային մարտկոցներից: Համապատասխան ՄԿՅ-ի և ՂՕՇՏ Р 5057.10.96 մանկապարտեզ մտնող պաշտպանիչ հաղորդիչը РЕ, միացվում է մետաղական խողովակների, ինժեներական կոմունիկացիաների ներսում և նրա սահմաններից դուրս:

Մանկապարտեզի շենք մտնող գլխավոր հաղորդիչային համակարգը TN-S նախատեսված է կրկնակի հողանցում, որը չպետք է գերազանցի 30 Պ և գտնվում է շենքի տարածքում ոչ քան 3 մ հեռավորությամբ, կատարելով կրկնակի հողանցման համակարգ և միացնելով գլխավոր հողանցման շինայի հետ (տես գծագիրը):

Ուղղահայաց հողանցման համակարգի միջուկը կարելի է կիրառել մետաղյա անկյունակով (70x70x5) մմ, հորիզոնական հողանցումը տափակ մետաղաձողով (40x5) մմ շղթայակապված: Հողանցվող մետաղյա անկյունակների խորությունը հողի մեջ պետք է լինի ոչ պակաս քան 2մ: Մետաղյա անկյունակների հեռավորությունը միմյանցից պետք է լինի ոչ պակաս, քան 1.5 մ: Հողանցվող վերգետնյա համակարգը ունենալու է փակ կոնտուրի տեսք: Հողանցման համակարգի մետաղյա անկյունակների և տափակ մետաղաձողի միացումները կատարվում է որակյալ էլետրագողման միջոցով:

Բոլոր մետաղյա ոչ հոսանքատար էլեկտրասարքավորումների մասերը հողանցվում են զրոյական հաղորդալարի РЕ միջոցով համապատասխան ՄԿՅ-ի: Կարճ միացման և ծանրաբեռման ժամանակ պաշտպանված է ապահովիչով և ավտոմատ անջատիչով:

Բոլոր վահանակները պետք է ունենան հողանցման և հողակցման (զրոյական) շինաներ N և РЕ:

						TSH-14 Անուշավանի մանկապարտեզի վերակառուցում		
						ԷՍԵ ԷՆ		
ՆԳԾ						Բացատրագիր	ՓՈՒԼ	ԹԵՐԹ
ԳԾԵՑ	Մ.ՇԱՐՈՅԱՆ						Ա.Ն.	1
								2
ԱՍՍԱԹԻՎ	ԳՈՒՅՔԱՀԱՄ.						ՄԱՌԱ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐԵ ՍՊԸ	

Էլեկտրաէներգիայի հաշվիչ սարք

Էլեկտրաէներգիայի հաշվառումը ապահովում է եռաֆազ էլեկտրոնային ակտիվ էներգիայով: Եռաֆազ էլեկտրահաշվիչը տեղադրվում է մանկապարտեզի առաջին հարկում Գլխավոր Բաշխիչ Վահանակում, որպես մանկապարտեզի սեփական գույքն է և կնիքվում է համապատասխան կազմակերպության կողմից:

Գլխավոր, բաշխվող և խմբակային մալուխներ և հաղորդալարեր

Մանկապարտեզի շենքը սնուցվում է տարածքում գտնվող ՏԵ-6254 տրանսֆորմատորային կայանի ցածր լարման վահանից: Տրանսֆորմատորային կայանից սնուցվում է АBBГНГ 4x35 ըստ հաշվարկված հզորության, քանի որ վերակառուցումից հետո ըստ նախագծի ավելացվում է սարքավորումների քանակը:

Մանկապարտեզի շենքում բոլոր եռաֆազ սարքավորումներին սնուցող մալուխները հնգակի պղնձալարերից են (L1, L2, L3, PE, N) իսկ միաֆազ սնուցող մալուխները՝ եռակի պղնձալարերից (L, PE, N): Էլ.սարքավորումները միացվում են մալուխներին համապատասխան գույներով (կանաչ-դեղին հողանցում PE), (կապույտը հողակցում N), իսկ (մնացած այլ գույները ֆազային լարումները L): Էլեկտրահաղորդալարի հեռավորությունը մեկ այլ կոնստրուկցիաներից պետք է լինի 400մմ-ից ոչ պակաս: Խմբակային և բաժանվող էլեկտրական ցանցերի սխեմատիկ միացումը կատարվում է ВВГНГ (А), իսկ I-ին կարգի էլ.սնուցումները ВВГНГ (А)LS մալուխներով:

Բոլոր միաֆազ էլ.սնուցվող սարքավորումները եռաֆազ սնուցումից պետք է բաշխված լինեն սիմետրիկ յուրաքանչյուր բաշխիչ վահանակներում:

Մանկապարտեզի շենքի ներսում բոլոր մոնտաժվող մալուխները անցկացվում են սվաղի տակ առանց մեկուսիչ խողովակների:

Սարքավորումների տեղակայում

Մանկապարտեզում բաշխիչ վահանակները տեղակայվում են միջանցքներում (բացառությամբ խոհանոցից) հատակից 1800մմ բարձրությամբ: Շենքի միջանցքներում, դասասենյակներում, դահլիճում և ննջարաններում վարդակները և անջատիչները տեղակայվում են հատակից 1500մմ բարձրությամբ համապատասխան ПУЭ-ի, իսկ մյուս սենյակներում տեղակայվում են հատակից 900մմ բարձրությամբ:

						TSH -14 Անուշավանի մանկապարտեզի վերակառուցում	թերթ
						ԷՍ և ԷՆ	2